

**ՀԱՅԵՐԵՆՈՒՄՊԱՐՍԿԵՐԵՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, Բ.գ.թ.
sonmiq20@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-64

Համառոտագիր

Յուրաքանչյուր լեզվի գոյության և զարգացման տարբեր փուլերում կատարվում են փոխառություններ. սա բնականոն զարգացման օրինաչափություններից է և պայմանավորված է լեզվական և արտալեզվական բազմաթիվ գործոններով:

Հայերենի փոխառյալ բառապաշարը, ի թիվս այլ լեզուների, ներառում է նաև արաբերենից փոխառված բառաշերտ: Ավելին, հայերենի պատմական զարգացման շրջափուլերից մեկում՝ միջին հայերենում, գերակշռում են արաբերենից կատարված փոխառությունները: Արաբերեն փոխառությունները, ժամանակագրությամբ պայմանավորված, կատարվել են անմիջականորեն կամ միջնորդավորված: Անմիջական կամ միջնորդավորված փոխառությունների տարբերակում, սակայն, չի կատարվել:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ միջնորդ լեզու, միջնորդավորված փոխառություն, հնչյունական համակարգ, հնչյունափոխություն:

**PHONETIC FEATURES OF INDIRECT ARABIC BORROWINGS IN
ARMENIAN
FROM PERSIAN**

SONA MIKAYELYAN

RA NAS Language Institute
Senior Researcher, Ph.D.
sonmiq20@gmail.com

Abstract

The article deals with indirectly borrowed Arabic words of the Armenian language (dialect) from Persian. It compares the borrowings used in the Persian language and in the Armenian dialect. It gives their correspondences and differences in phonetic level. Also, it considers those features that are conditioned by the intermediary language.

Keywords and phrases: intermediary language, indirect borrowing, phonetic system, phonetic change.

ФОНЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОПОСРЕДОВАННЫХ С ПЕРСИДСКОГО ЯЗЫКА АРАБСКИХ ЗАИМСТВОВАНИЙ

АРМЯНСКОГО ЯЗЫКА.

СОНА МИКАЕЛЯН

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н.

sonmiq20@gmail.com

Аннотация

В статье рассматриваются арабские слова армянского языка (диалекта) опосредованно заимствованные с персидского языка. Сравниваются арабские заимствования в персидском языке и в армянских диалектах. Констатируются их соответствия и различия на фонетическом уровне. Рассматриваются те особенности, которые являются результатом влияния языка-посредника.

Ключевые слова и словосочетания: язык-посредник, опосредованное заимствование, фонетическая система, фонетическое изменение.

Ներածություն

Հայերենի արաբական փոխառություններին անդրադարձել են մի շարք հայ լեզվաբաններ, ինչպես նաև օտարազգի հայերենագետներ⁷: Կատարվել են արաբերեն փոխառությունների ստուգաբանություններ, առանձնացվել են փոխառությունների կատարման հիմնական ժամանակաշրջանները, թեմատիկ (իմաստային) ընդգրկումը, ներկայացվել են արաբերեն փոխառությունների մատենագիտական բառացանկեր: Տարակարծությունների առիթ է տվել հատկապես արաբերեն առաջին փոխառությունների կատարման ժամանակաշրջանը, մի շարք բառերի դեպքում՝ դրանց հնարավոր արաբական ծագումը [3, էջ 34-35]:

Հարկ է նշել, որ արաբական փոխառությունների ուսումնասիրությունը ներառում է հիմնականում դրանց ստուգաբանությունը. փոխառյալ բառապաշարի հնչյունաբանական առանձնահատկություններին, բառիմաստային զարգացումներին անդրադարձը սահմանափակ է:

⁷ Այս մասին հիշատակումներ բազմիցս կատարվել են, ուստի ավելորդ ենք համարում կրկին անդրադառնալ դրան:

Հայերենի արաբական փոխառությունների տարբեր բառաշերտեր, դրանց փոխառման ժամանակագրությամբ, կիրառման բնույթով պայմանավորված, ունեն անմիջական կամ միջնորդավորված բնույթ: Հայերենագիտական ուսումնասիրություններում արաբական անմիջական և միջնորդավորված փոխառությունները չեն տարբերակվում: Բառացանկերում փոխառյալ բառային միավորների դիմաց նշվում է, թե որ լեզվից են դրանք ծագում՝ հաճախ շրջանցելով, թե որ լեզվի միջոցով են թափանցել գրական լեզու կամ տվյալ տարածքային տարբերաի (բարբառ), և հակառակը՝ բառային միավորի ծագումը նշվում է ըստ փոխառության միջնորդ լեզվի՝ առանց այդ մասին հիշատակելու:

Հայերենի արաբական միջնորդավորված փոխառությունների կիրառությունը պահպանվել է արդի հայերենի հիմնականում ժողովրդախոսակցական և բարբառային տարբերակներում, մասամբ՝ գրական լեզվում:

Հայերենի արաբական փոխառությունների միջնորդ լեզուները, պատմական հանգամանքներով պայմանավորված, եղել են պարսկերենը, թուրքերենը և ռուսերենը: Առավել մեծ թիվ են կազմում ընդհանուր *արաբապարսկաթուրքական* անվանմամբ փոխառությունները: Այսինքն՝ հիմնականում չեն առանձնացվում պարսկերենի և թուրքերենի միջնորդությամբ կատարված փոխառությունները: Դրանց հստակ առանձնացումը, իրավամբ, դժվար է այն առումով, որ արաբերեն միևնույն բառն առկա է այդ լեզուներում, և հաճախ դյուրին չէ հստակ նշել հայերենում (բարբառում) դրա ներթափանցման ուղին:

Ուսումնասիրությունը փորձ է մասամբ տարբերակելու հայերենի (բարբառի)՝ պարսկերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառությունները՝ ըստ հնչյունաբանական մակարդակում դրսևորվող համապատասխանությունների և տարբերությունների:

Ուսումնասիրության մեթոդը

Ուսումնասիրությունը կատարվել է զուգադրականմեթոդով: Լեզվական երևույթների զուգադրական ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վերհանելու լեզուների միջև տարբեր մակարդակներում առկա նմանություններն ու տարբերությունները՝ ընդհանրական եզրահանգումներ կատարելու նպատակով:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը

Հայտնի է, որ 7-րդ դ. Իրանի արաբական նվաճումից և պարսիկների կողմից իսլամի ընդունումից հետո արաբերենը՝ որպես կրոնի, գիտության և հաղորդակցության լեզու, մեծ ազդեցություն է գործել պարսկերենի վրա: Դրա հետևանքը ոչ միայն արաբական գրի համակարգի, այլև քերականական կառույցների, մեծ թվով բառերի փոխառումն էր: Արաբական բառապաշարը համարվում է պարսկերենի անքակտելի, օրգանական մասը: Մեծաթիվ բառեր (քիթաբ, վախտ, հաֆեզայյն) ներառված են պարսկերենի հիմնական բառաֆոնդում: Արաբերեն բառերը, ըստ տարբեր հաշվումների, կազմում են ընդհանուր բառապաշարի ավելի քան 50%-60%-ը [4, էջ 101]:

Արաբերեն փոխառությունները պարսկերենում, որոշ բացառություներով հանդերձ, գրվել են այնպես, ինչպես արաբերենում: Դրանք փոխառվել են անմիջականորեն, երկլեզու գիտնականների կողմից, որոնք այդ բառերը փոխելու կարիք չունեին: Բացի այդ՝ արաբերենի՝ որպես Ղուրանի գրի սրբությունը ևս խոչընդոտ էր ցանկացած փոփոխության համար [8]: Այդուհանդերձ, ժամանակի ընթացքում, արաբական ծագման բառերն ամբողջությամբ ենթարկվել է պարսկերենի հնչյունական օրինաչափություններին, քերականական և շարահյուսական կառուցվածքին [7, c. 21]:

7-րդ դ. արաբական նվաճողական քաղաքականության հետևանքով Հայաստանը ևս անցավ արաբների տիրապետության տակ: Հայերը, ի տարբերություն պարսիկների, դավանափոխ չեղան՝ պահպանելով իրենց հավատքը, լեզուն և գիրը: Դա է պատճառներից մեկը, որ հայ մատենագրության մեջ արաբերեն փոխառություններ կիրառվել են ավելի ուշ՝ 11-12-րդ դդ.՝ թարգմանական գրականության միջոցով: Դրանք հայերենին անցած անմիջական, գրական (գրավոր) փոխառություններ են: Ինչ վերաբերում է ժողովրդական լեզվում հնարավոր գործածություն ունեցած բառերին, ապա դրանց մի մասը կիլիկյան հայերենի մեջ մտել է Ասորիքի (պատմական Սիրիա) արաբների միջոցով, իսկ ավելի մեծ մասը՝ Պարսկաստանի ու պարսիկների միջոցով՝ արևելյան հայերենի մեջ [1, էջ 174]: Այսինքն՝ արևելահայերեն ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում առկա արաբական ծագման փոխառությունների զգալի մասը կատարվել է պարսկերենի միջնորդությամբ: Առաջնորդվելով այս տեսակետով՝ դիտարկենք, թե պարսկերենի և հայերենի

(բարբառի) արաբական փոխառությունները ինչպիսի համապատասխանություններ և տարբերություններ ունեն հնչյունական մակարդակում, և որ դրսևորումները կարելի է համարել պարսկերենի ազդեցության հետևանք, հետևաբար՝ հայերենի արաբական փոխառությունների՝ միջնորդավորված լինելու փաստարկ:

Արդյունքներ

Արաբերենի հնչյունական համակարգը ներառում է 28 բաղաձայն և երեք զույգ ձայնավոր հնչյուններ(երկար և կարճ տարբերակներով): Պարսկերենն ունի 23 բաղաձայն և 6 ձայնավոր հնչյուններ: Արաբերենի բաղաձայնների մեծ մասը պարսկերենում ունի համարժեքներ[9]:

Այդուհանդերձ, արաբական գրով արտահայտված որոշ բաղաձայններ օտար են պարսկերենի համար, ուստի նույնացել են պարսկերենի՝ հնչարտաբերական հատկանիշներով առավել մոտ բաղաձայններին: Այդպիսով, արաբերենի *s, ʃ* և *ṣ* բաղաձայնները պարսկերենում հընչել են որպես *s*, մյուս երեք՝ *z, ʒ* և *ẓ* բաղաձայնները՝ որպես *z*, հաջորդ՝ *t* և *ṭ* բաղաձայնները՝ որպես *t*, *d* և *ḍ* բաղաձայնները՝ որպես *d*, այնուհետև՝ *h* և *ḥ* բաղաձայնները՝ որպես *h* [9]: Այսինքն՝ տեղի է ունեցել էմֆատիկության՝ որպես արտասանական երկրորդական հատկանշի կորուստ, իսկ առաջնալեզվային *ʃ* և *ẓ* բաղաձայնները, *պարզեցվելով, փոխարինվել են համապատասխանաբար s* և *z* բաղաձայններով⁸:

Պարսկերենի այն հնչյունները, որոնք չկան արաբերենում, արաբապարսկական գրում ներկայացվել են հնչարտաբերական հատկանիշներով մոտ հնչյուններին համապատասխան տառերով (*b, j, z, k*), իսկ որոշ ժամանակ անց՝ դրանց և հնչյունատարբերիչ (դիակրիտիկ) նշանների համակցմամբ:

Արաբերենի *q* (կաֆ) և *g* (ղայն) բաղաձայնները, որոնք կան նաև թուրքերենում, օտար են պարսկերենի համար, ուստի «գրեթե հավասարեցված, համապատասխանեցված են և միանման են արտասանվում ստանդարտ պարսկերենում, բայց տարբերակվում են նրա բարբառների մեծ մասում» [8, p.135, 139-140]:

⁸ Արաբերենի *t*-ն համարժեք է անգլերենի *the* տառամիացությանը *think* բառում, իսկ *z*-ն՝ նույն փառամիացությանը՝ *this* բառում:

Արաբերենի կոկորդային ծայնեղ շփական '(այն) հնչյունը անտեսվում է բառասկզբի (խոսակցական պարսկերենում նաև՝ բառավերջում) դիրքում. այն իրացվում է ծայնավորների միջև, կամ որևէ ծայնավորից (ba:d<ba'd):

Խոչակային խուլ հպական '-ն (համզա) բաղաձայնն այլ բաղաձայնից հետո պահպանվում է, բայց խոսքում, բաղաձայնից առաջ, սովորաբար իրացվում է որպես ծայնավորի շարունակություն, թեև ճիշտ արտաբերման դեպքում այն կարող է հնչել ինչպես արաբերենում (sowal<so'al «հարց»): Բառավերջում, նախաձայնավորային դիրքում, համզան ժամանակակից պարսկերենում սովորաբար չի գրվում և չի արտասանվում (olamā -ye Qom< olamā'-e Qomm):

Արաբերենի w-ն պարսկերենում իրացվում է որպես շրթնատամնային v բաղաձայն, թեև նրա բարբառներում կարող է կիրառվել նաև որպես երկշրթնային բաղաձայն կամ կիսաձայն:

Արաբերենի մյուս բաղաձայններն ունեն պարսկերեն համարժեքներ կամ հնչարտաբերական հատկանիշներով մոտ հնչյուններ:

Ինչ վերաբերում է արաբերենի երեք «կարճ» ծայնավորներին, ապա դրանք փոխարինվել են պարսկերենի համապատասխան ծայնավորներով և գրության մեջ չեն տարբերակվում: Երկար ծայնավորները ներկայացվել են արաբերեն երկար ծայնավորներին համարժեք ā(ալիֆ), ā(վավ) և ī(յա) գրանշաններով՝ որպես «meters lectionis»⁹ [9]:

Միջին և վաղ նորապարսկերենի երկու մյուս ծայնավորները՝ ō և ē, որոնք անվանվում են մաս *māghūl* («ոչ արաբական ծայնավորներ»), ներկայացվել են համապատասխանաբար ā-ի հնչյունների միջոցով:

Արաբերենից փոխառյալ բառերի ծայնավորները, պայմանավորված բառի կազմում ունեցած դիրքով և հարևան բաղաձայների տեսակով, ենթարկվել են նաև առնմանման, տարնմանման և սինկոպի¹⁰, ինչպես նաև համանման այլ փոփոխությունների:

Արաբերենն ազդել է պարսկերենի ոչ միայն հնչյունաբանության, այլ նաև՝ հնչյունաչափության վրա՝ ներմուծելով բաղաձայնների՝ մի շարք օտար, պարսկերենին ոչ բնորոշ համակցություններ, հատկապես՝ բա-

⁹ Բաղաձայնագիր գրի մեջ բաղաձայն այն հնչյունները, որոնք օգտագործվում են երկար ծայնավոր հնչյունների արձանագրման համար՝ ալիֆ, վա, յա:

¹⁰ Անտիկ քերականության մեջ՝ բառի անշեշտ վանկի կամ ծայնավորի զեղչվելը:

ռավերջում (օր.՝ *rabt*): Պարսկերենի մի շարք բարբառներում, որպես արտասանական այս խնդրի լուծում, ներմուծվել է *էպենթետիկ ծայնավոր*¹¹:

Պարսկերենի արաբական փոխառությունների հնչյունական համակարգը զուգադրել ենք հայերենի բարբառների արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան բարբառի [5, էջ 135] արաբական փոխառությունների հնչյունական համակարգի հետ: Կարծում ենք, որ պատմական հանգամանքների բերումով այս բարբառում պարսկերենի հնարավոր միջնորդությամբ կատարված արաբերեն փոխառությունները կարող են բազմաթիվ լինել:

Արարատյան բարբառի խոսվածքների գերակշիռ մասում *բ, գ, դ, ծ, ջ* ծայնեղ բաղաձայններից բացի առկա են *բ', գ', դ', ծ', ջ'* շնչեղ ծայնեղ բաղաձայններ [2, էջ 55]: Նշվում է, որ «պարսկերենից և այլ լեզուներից անցյալում փոխառված բառերը ենթարկվել են բարբառի հնչյունափոխական օրինաչափությանը՝ *բաժակ* < *բ'աժակ*, *դարման* < *դ'արման*, *ծեթ* < *ծ'էթ* և այլն: Մինչդեռ նոր փոխառյալ բառերը նման հնչյունափոխություն չեն կրել՝ *բըլբուլ*, *ջւնդու*, *դաֆթար* և այլն» [2, էջ 65-66]: Այսինքն, բարբառի՝ արաբերեն ծագման փոխառյալ բառերում, ինչպես պարսկերենի արաբական փոխառություններում, այս բաղաձայնները նույն կերպ են գործառում. *խարաբ*¹² «ավեր, ավերակ», *դալալ* «1.փերեզակ, 2.մունետիկ, 3.միջնորդ», *դւվի* «վեճ, կռիվ», *իլաջ* «դեղ, հնար» և այլն: Արաբերենը չունի *գ, ծ* բաղաձայններ, ուստի փոխառյալ բառերում դրանք չեն հանդիպում:

Բարբառի *պ, կ տ, ծ, ճ* խուլ հպականներին համարժեք բաղաձայններ արաբերենում չկան: Արաբերենում կան շնչեղ խուլ *t* և էմֆատիկ փնչյուններ, որոնց կիրառությանը ստորև կանդրադառնանք:

Արարատյան բարբառում գործառող *փ, թ, ք, ց, չ* շնչեղ խուլ հպականների և հպաշփականների շարքից արաբերենը չունի *փ, ց, չ* բաղաձայններին համարժեքներ, ուստի արաբերեն ծագման բառերում դրանք չեն հանդիպում: Արաբերենի *t*-ն փոխառյալ բառերի բառասկզբում իրնչում է հայերեն բարբառի համարժեք բաղաձայնով. *թամահ* «ազահու-

¹¹ Երկու բաղաձայնների միջև ավելացող ծայնավոր հնչյուն, որը չի փոխում բառի իմաստը:

¹² Արաբերեն ծագման բառերն առանձնացրել ենք ըստ Ռ.Մարկոսյանի «Արարատյան բարբառ» (Ե., 1989) ուսումնասիրության:

թյուն», *թամամ* «ամբողջ, կատարյալ», *թասիբ* «պատիվ» և այլն: Ինչ վերաբերում է *k*-ին, ապա բառասկզբում և բառամիջում՝ *a*-ից առաջ, քմայնացել է՝ *քասիբ* «աղքատ, չքավոր», *քաֆուր* «անխիղճ, անողորմ», *քաքուլ* «մազափունջ», *հարաքաթ* «ուժ, կարողություն», իսկ մնացած դեպքերում մնացել է անփոփոխ. *քէֆ* «ուրախություն, խնջույք», *քըրեհ* «վարձ», *հէքիմ* «բժիշկ» և այլն:

Արարատյան բարբառի *q*, *ժ*, *ղ*, *վ* ձայնեղ շփականները բնութագրվում են որպես կայուն հնչյուններ, որոնք, մասնակի փոփոխություններով հանդերձ, բառի բոլոր դիրքերում մնացել են անփոփոխ [2, էջ 65-66]: Արաբերենը չունի միայն *ժ*-ին համարժեք հնչյուն: Պարսկերենում այս հնչյունը կա, սակայն արաբերեն ծագման բառերում, բնականաբար, չի գործառում: Ինչ վերաբերում է *q*-ին, ապա փոխառյալ բառերում անփոփոխ պահպանվել է՝ *զիբիլ* «աղբ, կեղտ», *զուլալ* «վճիտ, պարզ», *ազիզ* «սիրելի, թանկագին» և այլն:

Արաբերենի *w*-ն և՛ պարսկերենում, և՛ բարբառում իրացվում է որպես *v* (վ). *վաթան* «հայրենիք», *վախտ* «ժամանակ», *ջավահիր* «գոհար, ակնեղեն» և այլն:

Խնդրո առարկա բարբառում գործառող *u*, *շ*, *խ* խուլ շփականներ արաբերենում ևս առկա են: Սրանք կայուն հնչյուններ են, ուստի, քիչ բացառություններով հանդերձ, պահպանվել են ոչ միայն բարբառային հայերեն, այլ նաև փոխառյալ բառերում. *սաբաբ* «պատճառ», *ջինս* «ցեղ, տեսակ», *շահադ* «վկա», *շաբաթ* «օշարակ», *խարջ* «ծախս, հարկ», *խարաբ* «ավերակ» և այլն:

Ձայնորդ բաղաձայնները լեզուներում առավել կայուն հնչյուններ են: Բարբառում գրական հայերենի *մ*, *ն*, *լ*, *ռ*, *ր*, *յ* ձայնորդները բառի բոլոր դիրքերում անփոփոխ են մնացել. Բացառություններն առաջացել են առնմանության, տարնմանության, դրափոխության հետևանքով: Արաբերեն ծագման փոխառություններում *մ*, *ն*, *լ*, *յ* ձայնորդները ևս պահպանվել են. *մուրազ* «նպատակ, ցանկություն», *նազար* «չար աչք», *մասալա* «առակ, հեքիաթ», *յանի* «այսինքն» և այլն: Ուշագրավ է *ռ*, *ր* ձայնորդների կիրառությունը. բարբառում դրանցով սկսվող բառեր չկան: *Ռ* բաղաձայնը բառամիջում և բառավերջում պահպանվել է (առաջ<առաջ), իսկ *ր*-ն, հարյուրավոր բառերում կայուն պահպանվելով, մի խումբ բառերում հնչյունափոխվել է *ռ*-ի (մարդ<մարթ): Արաբերենում

առկա է միայն *r* բաղաձայն. *n-r* հնչյութային տարբերակում չկա: Քանի որ բարբառում որևէ բառ *n* տառով չի սկսվում, արաբերենից և այլ լեզուներից փոխառյալ բառերում բառասկզբում *n*-ից առաջ գրվում և արտասանվում է *ը/հը'ըռազի/հըռազի* «համաձայն, գոհ»: Պետք է նշել, որ սա, որքանով հնարավոր էր պարզել, բարբառում արձանագրված, արաբերեն ծագման միակ փոխառյալ բառն է: Արաբերեն բառերը կիրառվում են հիմնականում *ր*-ով՝ *հարամ* «անարդար, ապօրինի», *հէյրան* «հիացած», *կարար* «հանգիստ», հազվադեպ՝ *n*-ով. *ֆըռսանդ* «առիթ», *սըռ* «զաղտնիք» և այլն:

Ուշագրավ են արաբերենի հատկապես այն բաղաձայնների կրած փոփոխությունները, որոնց համարժեքները չկան պարսկերենում և հայերեն բարբառում: Ինչպես վերը նշել ենք, այդ բաղաձայնները պարսկերենում փոխարինվել են հնչարտաբերական հատկանիշներով առավել մոտ, համապատասխան բաղաձայնով: Դիտարկենք դրանց դրսևորումները խնդրո առարկա հայերեն բարբառում՝ արձանագրելու նմանությունները և տարբերությունները: Ինչպես նշել ենք, արաբերենի *s*, *t* և *š* բաղաձայնները, պարսկերենում պարզեցվելով, հնչում են որպես *s*: Հայերեն բարբառում արաբերենի այս բաղաձայնները համապատասխանեցվել են *ս*-ին. *իսան* «մարդ» (արաբ.՝ *insān*), *հիսաբ* «հաշիվ» (*ḥisāb*), *մասալա* «առակ, հեքիաթ» (*matala*) և այլն:

Արաբերեն բաղաձայնների հաջորդ՝ *z*, *ẓ* և *ẓ* եռաշարքը պարսկերենում արտահայտվել է *z*-ով: Հայերեն բարբառում ևս այս երեք բաղաձայնները փոխարինվել են *զ*-ով. *ազիզ* «սիրելի» (*#aziz*), *զուլում* «փորձանք, չարիք» (*ẓulum*), *նազար* «չար աչք» (*naẓar*) և այլն:

Հաջորդ՝ *t* և *ṭ* բաղաձայնները պարսկերենում գրվում և հնչում են *t*: Հայերեն բարբառում բառասկզբում *տ* բաղաձայնով սկսվող փոխառյալ բառեր արձանագրված չեն [2, էջ 377], ուստի բառի բոլոր դիրքերում *t* և *ṭ* բաղաձայնների փոխարեն կիրառվում է շնչեղ խուլ *թ* բաղաձայնը՝ *թաբախ* «պնակ», *թամամ* «ամբողջ, կատարյալ», *թասիբ* «պատիվ», *խաթա* «փորձանք», *խաթըր* «հարգ, պատիվ» և այլն:

Արաբերենի ձայնեղ *d* և էմֆատիկ *ḍ* բաղաձայնները պարսկերենում գործառում են *d*-ով: Հայերեն բարբառում *d*-ն ևս համապատասխանում *դ* հնչյունին, ինչպես՝ *դււվի* «վեճ», *կայդա* «կարգուկանոն, քաղաքավարություն» և այլն: Էմֆատիկ *ḍ*-ն, սակայն, հիմնականում հնչյունափոխ-

վել է *զ-ի.բազի* «որոշ, մի քանի» (*ba'd*), *զարար* «վնաս» (*darar*), *զարբ* «հարված» (*darb*), *հազըր* «պատրաստ» (*hadir*), *հավուզ* «ավազան» (*hauḍ*) և այլն: Սա, հավանաբար, թուրքերենի ազդեցության հետևանք է:

Ինչ վերաբերում է *հ* և *ի* բաղաձայններին, ապա նրանք պարսկերենում, ինչպես նշել ենք, կիրառվում են *հ*-ով: Արարատյան բարբառում *հ* բաղաձայնը խոսվածքների գերակշիռ մասում հիմնականում անփոփոխ պահպանվել է: Մի խումբ խոսվածքներում տեղի են ունեցել *հ<ժ* (օրինակ՝ *հող<ժող*), այլ խմբում՝ *հ<հ'* (օրինակ՝ *առու<հ'առու*), իսկ խոսվածքների երրորդ խմբում՝ *հ<խ* (օրինակ՝ *հաց<խաց*) հնչյունափոխություններ: Նշվում է, որ թուրքերենից ու թուրքերենի միջոցով անցած (օրինակ՝ արաբերեն) օտար փոխառյալ բառերում *հ*-ն անփոփոխ պահպանվել է՝ *հարամ*, *հալալ*, *հազըր* և այլն^[2, էջ 74-75]: Արաբերեն ծագման բառերում ևս այս հնչյունը պահպանվել է՝ *թամահ* «ագահություն», *ջավահիր* «գոհար, ակնեղեն», *շահադ* «վկա», *ջրհէզ* «օժիտ» և այլն: *հ*-ի հնչյունափոխությամբ զուգահեռ կիրառվող բառային միավորները սակավ են՝ *ջահէլ/ջայէլ* «1.երիտասարդ, 2.անփորձ», *ֆահմ/ֆայմ* «շնորհք, զգացողություն», *հինա/սինա* «հինա» և այլն:

Արաբերենի *զ* (կաֆ) և *ց* (դայն) բաղաձայնները, օտար լինելով պարսկերենի հնչյունական համակարգի համար, թեև գրական պարսկերենում չեն տարբերակվում, սակայն տարբերակվում են նրա բարբառների մեծ մասում: Ինչ վերաբերում է Արարատյան բարբառի խոսվածքներին, ապա բառասկզբում տեղի են ունեցել *զ<կ'կասաբ* «մսագործ» (*qaṣṣāb*), *կուրբան* «զոհ, մատաղ» (*qurbān*) և այլն, իսկ բառամիջում և բառավերջում՝ *զ<խ* հնչյունափոխություններ՝ *թաբախ* «պնակ» (*tabaq*), *նախշ* «զարդանկար» (*naqš*), *լոխում* «փափուկ քաղցրավենիք» (*luqum*) և այլն: Մի շարք բառերի դեպքում կիրառվում են նաև *զ<ղ* հնչյունափոխությամբ ձևեր՝ *կալա/ղալա* «բերդ» (*qala'a*), *կումար/ղումար* «դրամով խաղ» (*qumār*), *կուվաթ/ղըվաթ* «ուժ» (*quwa*) և այլն:

Պարսկերենին բնորոշ չէ հատկապես միավանկ բառերի բառավերջում բաղաձայնների կուտակումը, ուստի այդ լեզվի մի շարք բարբառներում բաղաձայնների միջև ավելանում է *էպենթերիկ ծայնավոր*՝ *ə*: Կարծում ենք, որ հայերենի բազմաթիվ, այդ թվում նաև՝ Արարատյան բարբառի՝ արաբերեն ծագման փոխառյալ մի շարք բառերում նմանօրինակ ծայնավորի առկայությունը կարող է լինել նաև պարսկերենի հնարավոր ազդեցության հետևանք. *ասըլ* «ծագումը, հիմքը», *ախըր* «վերջը,

հետագան», *խաթըր* «պատիվ, ակնածություն», *հազըր* «պատրաստ», *զալըմ* «ուժեղ, դաժան, անգույթ» և այլն:

Ինչ վերաբերում է ձայնավորական համակարգին, ապա արաբերենի երկար ձայնավորները Արարատյան բարբառում ևս հիմնականում նույնացել են համապատասխան կարճ ձայնավորների հետ: Ձայնավորների հնչյունափոխության դեպքերը բազմաթիվ են: Առավել հաճախ դեպ են հետևյալները՝ *a* < *է*՝ *հէյրան* «զմայլված» (*ḥayrān*), *հէքիմ* (*ḥakīm*) «բժիշկ», *հէսաբ* «հաշիվ» (*ḥisāb*), *ջահէլ* «երիտասարդ, անփորձ» (*jāhil*), ինչպես նաև՝ *a*-ի քմայնացում՝ *զւիհլւի* «համբերություն», *դւիվի* «վեճ», *ս<օ*՝ *լօխում* «փափուկ քաղցրավենիք» (*luqum*), *մօլլա* «մահմեդական կրոնավոր» (*maula*) և այլն:

Եզրակացություններ

Հայերենի արևելյան խմբակցության Արարատյան կամ Երևանի բարբառում և պարսկերենում, պայմանավորված պատմական հանգամանքներով, գործառում են արաբերենից փոխառված բազմաթիվ բառեր: Պարսկերենում արաբերեն բառերը գրական լեզվի անքակտելի, օրգանական մաս են կազմում (բառապաշարի առնվազն կեսը) և հիմնականում չեն գիտակցվում որպես փոխառված: Արդի գրական հայերենում արաբերենից փոխառված բառերն էականորեն քիչ են (մի քանի տասնյակ): Դրանք հիմնականում պահպանվել են հայերենի ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերում և, ի տարբերություն հայ մատենագրությամբ ավանդված և այսօր հիմնականում կենսունակությունից զուրկ բառաշերտի, հայերենի պատմական զարգացման հետագա շրջափուլերում փոխառվել են պարսկերենի, թուրքերենի, ռուսերենի միջնորդությամբ:

Հայերենի բարբառների արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան բարբառում զգալի թիվ են կազմում պարսկերենի միջնորդությամբ կատարված փոխառությունները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բառապաշարը մասամբ փոխառվել է պարսկերենում կրած հնչյունական փոփոխություններով, մասամբ էլ՝ կրել հայերեն բարբառի հնչյունափոխական օրինաչափությունները: Արաբերեն ծագման միջնորդավորված փոխառությունները, ի տարբերություն բարբառի՝ ավելի վաղ շրջանում կատարած փոխառությունների, շնչեղ ձայնեղ բա-

ղաձայնների հնչյունափոխություններ չեն կրել. այդ առումով նման են պարսկերենում գործառող բառաձևերին: Բարբառի հնչյունական ազդեցություն է շնչեղ խուլ հպական ք-ի քմայնացումը բառասկզբի դիրքում: Ձայնեղ և խուլ շփականները, ինչպես նաև ծայնորդները պարսկերենում և հայերեն բարբառում նույն համապատասխանություններն ունեն: Այս շարքից տարբերվում է միայն հայերեն բարբառում ր և ռ բաղաձայնների՝ ոչ հնչութային արժեքով կիրառությունը:

Ինչ վերաբերում է արաբերենի այն բաղաձայններին, որոնց համարժեքները պարսկերենում և հայերեն բարբառում չկան, դրանք պարզեցվել են՝ գործառնելով առանց էմֆատիկության՝ որպես արտասահմանային երկրորդական հատկանշի: Էմֆատիկ հնչյուններից միայն ժ-ն, ի տարբերություն պարսկերենի, հայերեն բարբառում հնչյունափոխվել է զ-ի: Բարբառում պարսկերենից տարբեր է նաև արաբերենիզ և ց բաղաձայնների դրսևորումը. եթե պարսկերենում դրանք գրեթե նույնացել են, ապա հայերեն բարբառում ց բաղաձայն ունեցող բառեր, կարելի է ասել, չեն հանդիպում, իսկ զ-ն, ըստ բառի կազմում զբաղեցրած դիրքի, տարբեր հնչյունափոխություններ է կրել: Ինչ վերաբերում է ծայնավորական համակարգին, ապա և՛ պարսկերենում, և՛ հայերեն բարբառում արաբերենի երկար ծայնավորները կիրառվում են դրանց համարժեք կարճ տարբերակներով, իսկ կարճ ծայնավորները, պահպանվելով հանդերձ, բարբառում առանձին դեպքերում քմայնացել են կամ ենթարկվել տարբեր հնչյունափոխությունների:

Ե՛վ հայերեն բարբառում, և՛ պարսկերենում արաբերենի հնչյունական համակարգը, առանձին տարբերություններով հանդերձ, հիմնականում ներկայացվել է նույն կերպ. Հնչյունների մեծ մասը համապատասխանել է տվյալ լեզվի (բարբառի) համարժեքներին, իսկ այն հնչյունները, որոնք չունեն համարժեքներ, կրել են տվյալ լեզվի (բարբառի) հնչյունական համակարգի ազդեցությունները:

Գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Ե., 2013 (վերատպություն):
2. Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ, Ե., 1989:
3. Միքայելյան Ս., Հայերենի արաբական փոխառությունների ժա-

մանակի հարցը // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019, 3 (30):

4. Նալբանդյան Գ., Պարսից լեզվի քերականություն, Ե., 1980:
5. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
6. Баранов Х., Арабско-русский словарь, т. 1, 2, М, 2019 (переиздание).
7. Барышников А. Ф., Лексикология и фразеология персидского языка, М., 1962.
8. Pisowicz A, *Origins of the New and Middle Persian Phonological Systems*, Cracow, 1985.
9. <https://iranicaonline.org/articles/arabic-v>